



ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
CENTRE FOR POLICY STUDIES



Վիշեգրադյան քառյակի փորձի կիրառումը Հայաստանում բարեփոխումների առաջխաղացման համար

Ծրագիրն իրականացվում է գործընկերների մասնակցությամբ.

Res Publica հիմնադրամ / Visegrad Insight (Լեհաստան)
Յագելոնյան ակումբ (Լեհաստան)
Բուդապեշտի հանրային քաղաքականության վերլուծությունների ինստիտուտ (Հունգարիա)
«EUROPEUM» եվրոպական քաղաքականության ինստիտուտ (Չեխիա)
EURACTIV Սլովակիա



BUDAPEST
INSTITUTE

VISEGRAD / INSIGHT



Արտաշես Խալաթյան

ՀՀ զինված ուժերի կարգավիճակի և
կառավարման սահմանադրական
խնդիրները միջազգային փորձի
համատեքստում

Սույն հրատարակումը լույս է տեսնում Քաղաքականության հետազոտական կենտրոնի կողմից լեհ, հունգարացի, չեխ և սլովակ փորձագետների հետ համագործակցությամբ իրականացվող «Վիշեգրադյան քառյակի փորձի կիրառումը Հայաստանում բարեփոխումների առաջխաղացման համար» ծրագրի շրջանակում:

Ծրագիրը ֆինանսավորվում է Լեհաստանի, Հունգարիայի, Չեխիայի և Սլովակիայի կառավարությունների կողմից՝ Միջազգային Վիշեգրադյան հիմնադրամի միջոցով, որի նպատակը Գենտրոնական Եվրոպայում հարատև տարածաշրջանային համագործակցության առաջխաղացումն է:

This paper is published within the Advancing Reforms in Armenia with Visegrad Four's Know-how project framework.

The project is co-financed by the Governments of Czechia, Hungary, Poland and Slovakia through Visegrad Grants from International Visegrad Fund. The mission of the fund is to advance ideas for sustainable regional cooperation in Central Europe.

Grant #22010376

Additional information: <https://centreforpolycystudies.org/en/Visegrad>

Հոդվածաշարի խմբագիրներ՝ Արմեն Գրիգորյան, Տաթևիկ Ղազարյան
Series editors: Armen Grigoryan, Tatevik Ghazaryan

© Քաղաքականության հետազոտական կենտրոն / Centre for Policy Studies
© Միջազգային Վիշեգրադյան հիմնադրամ / International Visegrad Fund

Երևան, մայիս 2021
Yerevan, May 2021

«Վիշեգրադյան քառյակի փորձի կիրառումը Հայաստանում բարեփոխումների առաջխաղացման համար» ծրագրի նպատակը Հայաստան-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով առաջնահերթություն համարվող որոշ ոլորտներում բարեփոխումներին նպաստելն է:

Ծրագիրն, ի լրումն Վիշեգրադյան քառյակի երկրների քաղաքականության, անդրադարձել է հետևյալ թեմաներին.

- քաղաքացիական անվտանգության ոլորտի բարեփոխում,
- առողջապահության ոլորտ,
- այլընտրանքային էներգետիկայի զարգացում,
- տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային կառավարում և տեղեկատվական հասարակություն:

Յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ կազմակերպվել է երեք առցանց սեմինար՝ Վիշեգրադյան քառյակի երկրներից փորձագետների մասնակցությամբ, իսկ այնուհետև՝ փորձագիտական քննարկումներ, ինչպես նաև նախապատրաստվել են հոդվածներ՝ քաղաքականության առաջարկներով:ⁱ

Սահմանադրական իրավունքի մասնագետ, Միջազգային և անվտանգության հարցերի հայկական ինստիտուտի փորձագետ, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի դասախոս Արտաշես Խալաթյանի հոդվածն ամփոփում է ծրագրի անվտանգության ոլորտի բարեփոխմանը նվիրված հատվածը:

Սեմինարներում փորձագետների զեկույցները և սույն հրապարակումը չեն արտահայտում Միջազգային Վիշեգրադյան հիմնադրամի կամ որևէ այլ կառույցի տեսակետը:

This article by constitutional law expert, Armenian Institute of International and Security Affairs legal expert, lecturer at the educational complex of the Armenian Police, Artashes Khalatyan, summarises the findings of the project module covering civilian security sector reform. Opinions expressed in the experts' presentations and in this paper do not represent those of the International Visegrad Fund or any public or private institution.

ⁱ Սեմինարների տեսագրություններն ու ծրագրին առնչվող այլ նյութեր հասանելի են <https://centreforpolycystudies.org/Visegrad> կայքում:

Արտաշես Խալաթյան

ՀՀ զինված ուժերի կարգավիճակի և կառավարման սահմանադրական խնդիրները միջազգային փորձի համատեքստում

Նախաբան

Զինված ուժերը Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմնական ինստիտուտներից են, որոնք ապահովում են Հայաստանի արտաքին անվտանգությունը: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը, անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը և սահմանների անձեռնմխելիությունը:

Ցանկացած պետության հիմնարար գործառույթներից մեկն արտաքին անվտանգության ապահովումն է և ժողովրդի կյանքի իրավունքի պահպանումն ու պաշտպանությունը: Այս ուղղությամբ պետական իշխանության համակարգում առանձնացվում է զինված ուժերի ենթահամակարգը, որը գործում է գործադիր իշխանության թևում:

Ելնելով իր կազմակերպման հիմքերից, գործունեության սկզբունքներից և պետաիշխանական համակարգում տեղաբաշխվածությունից՝ զինված ուժերն առանձնանում են կենտրոնացված կառավարմամբ, ողջամտորեն ներփակ բնույթով և քաղաքացիական իշխանության մարմինների հետ փոխհարաբերությունների յուրահատուկ կարգով:

Սահմանադրական իրավունքի տեսանկյունից զինված ուժերը և, նախևառաջ, բանակը՝ որպես գործադիր իշխանության մարմին, հավասարակշռվում են իշխանության մյուս ճյուղերի կողմից, ինչպես նաև գտնվում են մարդու իրավունքների և քաղաքացիական վերահսկողության արգելապատնեշների ներքո: Այդպես պահպանվում է հավասարակշռությունը մրցակցող շահերի՝ մի կողմից պետական անվտանգության և մյուս կողմից՝ ժողովրդավարական կարգի և մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանվածության միջև՝ թույլ չտալով զինված ուժերին բռնազավթել իշխանությունը կամ այլ կերպ դուրս գալ իրենց գործառույթային լիազորությունների շրջանակից:

Այս համատեքստում գիտական և փորձագիտական հետաքրքրություն են ներկայացնում 2015 թ. սահմանադրական փոփոխություններով Հայաստանի զինված ուժերի համակարգում տեղի ունեցած կազմակերպական և կառավարչական վերափոխումները և դրանց հարաբերակցությունը երկրի սահմանադրական ժողովրդավարության ինստիտուտների հետ: Հոդվածի հետագա շարադրանքում ամփոփ վերլուծության կենթարկվեն սույն հարցադրումները՝ ելնելով նաև միջազգային փորձից:

Զինված ուժերի սահմանադրաիրավական կարգավիճակի հիմնական տարրերը

Զինված ուժերը բոլոր սահմանադրական ժողովրդավարություններում ունեն, ըստ էության, հետևյալ հիմնական գործառույթը՝ ապահովել հասարակության և պետության անվտանգությունն արտաքին ագրեսիայից, այդ թվում պաշտպանել պետության սահմանների անձեռնմխելիությունն ու տարածքային ամբողջականությունը: Բազմաթիվ պետություններում զինված ուժերի այս գործառույթը սահմանադրական ամրագրում է ստացել: Խոսքը վերաբերում է Հայաստանին, Ֆրանսիային, Իտալիային, Լեհաստանին, Հունգարիային, Դանիային, Գերմանիային, Ավստրիային, Իսպանիային և այլ պետությունների: Մի շարք պետություններում զինված ուժերի գործառույթային ապարատը սահմանված է ընթացիկ օրենսդրությամբ, օրինակ՝ Չեխիայում, Սլովակիայում, Էստոնիայում, Ֆինլանդիայում, Ուկրաինայում և այլուր:

Զինված ուժերի կարգավիճակի հաջորդ էական տարրը նրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն է: Վերջինս ընդգրկում է երկկողմանի գործընթաց, որին մասնակցում են զինված ուժերն ու հասարակությունը: Ժողովրդավարական պետությունում սահմանադրական ամուր երաշխիքները պետք է ապահովագրեն հասարակությունն ու պետությունը երկու տեսակի վտանգից՝ ռազմական հավակնություններ ունեցող քաղաքական գործիչներից և քաղաքական հավակնություններ ունեցող զինվորականներից:¹ Այսինքն՝ քաղաքացիական վերահսկողության սահմանադրաիրավական կառուցակարգերը կոչված են պաշտպանել պետության սահմանադրական կարգը ռազմական դիկտատուրայից, իսկ զինված ուժերը՝ քաղաքական-կուսակցական խմորումներից:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ինստիտուտն այս կամ այն ձևով ամրագրված է Իտալիայի, Գերմանիայի, Շվեյցարիայի, Խորվաթիայի, Լեհաստանի, Հայաստանի և այլ երկրների սահմանադրություններում կամ բխում է պետությունների ժողովրդավարական սահմանադրական կարգի վերաբերյալ սահմանադրական կարգավորումների բովանդակությունից և էությունից (Արգենտինա, Ֆրանսիա, Շվեդիա և այլն): Այս ինստիտուտն, ըստ էության, հանդիսանում է Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների սահմանադրական կարգի և ընդհանրապես, հավաքական Արևմուտքի իրավական ժառանգության հիմնական տարրերից մեկը:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը ներառում է նախևառաջ զինված ուժեր - քաղաքական իշխանություն փոխհարաբերությունների համակարգը, որտեղ առաջնային դերակատարում ունեն օրենսդիր և գործադիր իշխանության առաջնային մանդատ ունեցող պետական ինստիտուտները: Խորհրդարանական պետություններում դա խորհրդարանն է, նախագահական կամ կիսանախագահական պետություններում՝

¹ Solana, Javier, The Role of the Military in a Democracy, 2 հուլիսի 1998 թ., https://www.nato.int/cps/en/natohq/opinions_26071.htm?selectedLocale=en

խորհրդարանն ու նախագահը: Առաջնային մանդատ ունեցող պետական մարմինները, լինելով քաղաքացիների քվեով ձևավորված քաղաքականաստեղծ սահմանադրական մարմիններ, զինված ուժերի հետ հարաբերություններում ունեն առաջնային նշանակություն:² Սա բացատրվում է նրանով, որ ընտրովի բարձրագույն պետական մարմիններն օժտված են իրենց որոշումների և, լայն իմաստով, մշակած քաղաքականության իրավասու մարմինների, այդ թվում զինված ուժերի կողմից կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու լիազորությամբ:³

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը չի սահմանափակվում միայն քաղաքական իշխանությունը ներկայացնող պետական ինստիտուտների կողմից բանակի և մյուս ուժային կառույցների գործունեության իրավաչափությանն ու հիմնավորվածությանը հետևելով: Այստեղ մեծ դերակատարում ունի նաև դատական իշխանությունը, որը, իրականացնելով արդարադատության սահմանադրական գործառույթ, միայն իրեն վերապահված սահմանադրական և օրենսդրական լիազորությունների գործադրմամբ ապահովում է զինված ուժերի գործունեության օրինականությունը:⁴

Զինված ուժերը գտնվում են ոչ միայն քաղաքացիական իշխանության, այլև քաղաքացիական հասարակության և մասնավորապես, իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների և գանգվածային լրատվության միջոցների մշտադիտարկման ներքո, որոնք, հանդիսանալով ինքնակազմակերպվող հանրության գործուն ինստիտուտներ, լրացուցիչ երաշխիք են՝ ապահովելու համար ի բնե և գործնականում փակ ուժային կառույցների ըստ հնարավորին թափանցիկությունն ու հանրային հաշվետվողականությունը:

Քաղաքացիական վերահսկողության ֆենոմենը հարկ է դիտարկել ոչ միայն քաղաքական և դատական իշխանություն - զինված ուժեր փոխհարաբերությունների համատեքստում, այլև հաշվի առնելով իշխանության տարանջատման սահմանադրական սկզբունքը: Ըստ այդմ, զինված ուժերը հանդիսանում են գործադիր իշխանության մաս և հավասարակշռվում ու հակակշռվում են իշխանության մյուս ճյուղերի կողմից: Հետևաբար, սահմանադրական համակարգի կայունության տեսանկյունից խիստ կարևոր է, որպեսզի զինված ուժերը, ինչպես և պետաիշխանական մյուս ինստիտուտները, ենթակա լինեն սահմանադրական նշյալ սկզբունքի նորմատիվ տրամաբանությանը, այն է՝ ունենան որոշակի և իրենց սահմանադրական կարգավիճակից բխող լիազորություններ, վերջիններիս շրջանակում լինեն ինքնուրույն և միաժամանակ որպես գործադիր իշխանության կազմում գործող

² Born, Hans and Cecilia Lazzarini. Preliminary Report on Civilian Command Authority over the Armed Forces in their National and International Operations. European Commission of Democracy Through Law (Venice Commission) document CDL-DEM(2006)003, p. 4.

³ Boros, Luis L. *Civilian Control or Civilian Command?* Working Paper no. 121. Geneva: Geneva Centre for Democratic Control of Armed Forces, August 2003, p. 4.

⁴ European Commission of Democracy Through Law (Venice Commission) document CDL-AD(2008)004, Report on the Democratic Control of the Armed Forces, p. 17.

մարմին՝ գտնվեն խորհրդարանի և դատական իշխանության վերահսկողության ներքո:

Զինված ուժերի սահմանադրական կարգավիճակի մյուս տարրը նրանց քաղաքական չեզոքությունն է: Վերջինս զինված ուժերի սահմանադրական առաքելության համապետական և համահասարակական բնույթից ածանցվող սկզբունք է, որը թույլ է տալիս ապահովել պետության անվտանգային գործառույթի պատշաճ իրացումը, ինչպես նաև ժողովրդավարական սահմանադրական կարգի պաշտպանության երաշխիք է հանդիսանում՝ արգելելով բանակին ուժ կիրառել՝ սահմանափակելու մարդկանց քաղաքական ու քաղաքացիական իրավունքների իրացումը, ինչպես նաև որևէ այլ կերպ միջամտելու քաղաքական գործընթացներին:

Զինված ուժերի ապաքաղաքական (ապակուսակցական) բնույթն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 14-րդ հոդվածի 2-րդ մասում, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և քաղաքացիական վերահսկողության ներքո են գտնվում:

Զինված ուժերի քաղաքական չեզոքության պահպանումը մեծապես կախված է քաղաքացիական վերահսկողության կառուցակարգերի պատշաճ և արդյունավետ գործարկումից. հակառակ պարագան բացասաբար կազդի ուժային կառույցների կարողունակության վրա, ինչպես նաև կիսախտի պետական իշխանության համակարգում ուժային հավասարակշռությունը՝ հիմքեր ստեղծելով զինված ուժերի քաղաքական միջամտության և անգամ պետական հեղաշրջում իրականացնելու համար:

Զինված ուժերի քաղաքական չեզոքության պահանջը, որը տեղ է գտել ՀՀ Սահմանադրությունում, ևս միջազգային սահմանադրական սկզբունք է և գործում է այնպիսի երկրներում, ինչպիսիք են՝ Իտալիան, Լեհաստանը, Իսպանիան և այլ պետություններ, ամրագրված է Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) փաստաթղթերում:⁵ Այդ թվում այս սկզբունքի շրջանակում է դիտարկվում քաղաքական ղեկավարությանը ենթարկվելու և իրենց իրավասությունից դուրս չգալու զինված ուժերի պարտականությունը:⁶

Վերը քննարկված սահմանադրաիրավական սկզբունքները որոշում են զինված ուժերի տեղն ու դերը պետաիշխանական համակարգում և ուրվագծում են նրանց կարգավիճակը: Այս համատեքստում խիստ կարևոր են դառնում զինված ուժերի կառավարման իրավական հիմքերը, որոնք պետք է լինեն բավարար չափով հստակ, կանխատեսելի և համահունչ զինված ուժերի գործունեության

⁵ Venice Commission document CDL-AD(2008)004, p. 61, OSCE Compendium on Human Rights of Armed Forces: Civil and Political Rights, 2021, <https://www.osce.org/odihr/480182> և Tatikyan, Sossi. On the Current Role of the Armed Forces and Civil Society in the Political Situation in Armenia, 1 մարտի 2021 թ., <https://www.evnreport.com/opinion/on-the-current-role-of-the-armed-forces-and-civil-society-in-the-political-situation-in-armenia>

⁶ Նույն տեղում:

առանձնահատկություններով պայմանավորված՝ դրանց ներքին կարգապահության անվերապահ պահպանման հրամայականին:

Զինված ուժերի աստիճանակարգության և կառավարման սահմանադրական հիմքերը

Զինված ուժերի՝ որպես սահմանադրական ինստիտուտի գործառույթների իրականացումը պահանջում է կառավարման հստակ կառուցակարգեր: Վերջիններս հանգում են, նախևառաջ, զինվորական կարգապահությանը և զինված ուժերի կազմակերպման աստիճանակարգային բնույթին, որոնց պահպանման և պատշաճ գործառման համար անհրաժեշտ է սահմանափակել զինված ուժերի ներսում զինվորական ծառայողների որոշ հիմնական իրավունքներ՝ քաղաքական գործունեության, խոսքի, հավաքների, միավորման, գործադուլների իրավունքները:⁷

Ժամանակակից զինվորական ծառայողի հասկացությունը հիմնված է բարձր մակարդակի մասնագիտական արհեստավարժության, մոտիվացիայի և կարգապահության վրա, որոնց շնորհիվ զինվորը պետք է ունակ լինի ինտեգրվել և գործել բարդ միջազգային առաքելություններում:⁸

Զինված ուժերի կառավարման համակարգի կարգապահական և աստիճանակարգային բնույթը պայմանավորված է ինչպես զինված ուժերի՝ որպես կառավարման ենթահամակարգի առանձնահատկություններով, որոնց ուժով բանակը և ուժային մյուս կառույցները պետք է ունենան որոշումների և հրամանների կատարման ուղղահայաց հարաբերությունների համակարգ, այնպես էլ զինված ուժերի՝ գործադիր իշխանության մաս լինելով: Վերջինիս հիմնական առանձնահատկություններից մեկը հենց ուղղահայաց կառավարման առկայությունն է և որոշումների ընդունման ու կատարման հիերարխիկ բնույթը:

Գործադիր իշխանությունն ինքնին կոչված է իրականացնել պետական կառավարում՝ բառի գործադիր՝ կատարողական իմաստով: Իսկ կառավարումը՝ որպես սոցիալ-իրավական երևույթ, ունի հետևյալ փոխկապակցված տարրերը՝ կառավարող սուբյեկտի և կառավարվող օբյեկտի առկայություն, սուբյեկտի կարգավորող ներգործությունն օբյեկտի նկատմամբ, ենթակայական հարաբերություններ սուբյեկտի և օբյեկտի միջև:⁹ Նշված տարրերի գործողության համար հարկավոր են որոշակի կառուցակարգային երաշխիքներ և հատկապես որոշումների և հրամանների ընդունման ու կատարման աստիճանակարգություն և ենթակայական կարգապահություն: Հետևաբար, զինված ուժերը, լինելով

⁷ Бюро ОБСЕ по демократическим институтам и правам человека (БДИПЧ), Руководство по правам человека и основным свободам военнослужащих, 2008, с. 20, <https://www.osce.org/files/f/documents/1/2/86124.pdf>

⁸ Mannitz, Sabine. *The “Democratic Soldier”: Comparing Concepts and Practices in Europe*. London: Ubiquity Press, 2013, p. 29.

⁹ Դանիելյան Գևորգ (Խմբ.), Հայաստանի Հանրապետության վարչական իրավունք, Երևան, 2012, էջ 16:

գործադիր իշխանության բաղադրիչներից մեկը, նույնպես պետք է կառուցված լինեն նշյալ պոստուլատների վրա:

Մասնավորապես, «ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զինվորական կարգապահությունը յուրաքանչյուր զինծառայողի կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով, այլ օրենքներով ու զինված ուժերում գործող այլ կանոնագրքերով, ինչպես նաև հրամանատարների (պետերի)՝ իրենց լիազորությունների շրջանակներում տված հրամաններով սահմանված պարտականությունների և կարգուկանոնի խստիվ ու ճշգրիտ պահպանումն է:

Օրենքի մեջբերված իրավադրույթը ճշգրտորեն ամփոփում է կառավարման վերոգրյալ եռամիասնական տարրերի նորմատիվ էությունը, որը դրսևորվում է կառավարման ուղղահայացի ձևավորմամբ և վերադաս հրամանատարության կարգադրությունների անշեղ կատարմամբ:

Հատկանշական է այն հանգամանքը, որ եթե բացակայում են ներքաղաքական կամ արտաքին-քաղաքական առանձնահատուկ հանգամանքներ, ժողովրդավարական պետությունների զինված ուժերի կառուցվածքի ու կառավարման հիմնադրույթներն սկզբունքորեն նմանատիպ են, համադրելի և շոշափելի կապ չունեն գործող այս կամ այն պետական կառավարման համակարգի հետ: Օրինակ՝ պետությունների զինված ուժերը, որպես կանոն, ունեն գերագույն գլխավոր հրամանատար, որի պարտականությունները սովորաբար սահմանադրորեն դրված են պետության գլխի՝ նախագահի վրա: Նման դրույթներ են պարունակում Ռուսաստանի (գերնախագահական հանրապետություն), ԱՄՆ-ի (նախագահական հանրապետություն), Ֆրանսիայի, Լիտվայի, Սլովակիայի (կիսանախագահական հանրապետություններ), Իտալիայի, Չեխիայի, Հունաստանի (խորհրդարանական հանրապետություններ) և այլ երկրների սահմանադրությունները:¹⁰

Ի տարբերություն նշյալ երկրների՝ Գերմանիայում զինված ուժերի կառավարումն զգալիորեն ապակենտրոնացված է, գլխավոր հրամանատարի ինստիտուտն ունի էապես սահմանափակ բնույթ և գործում է միայն ռազմական դրության (ըստ Գերմանիայի սահմանադրության 115-բ հոդվածի 1-ին մասի՝ պաշտպանության դրության) ժամանակ՝ վերապահվելով կանցլերին՝ վարչապետին: Խաղաղ ժամանակ զինված ուժերը ղեկավարում է պաշտպանության նախարարը (Գերմանիայի սահմանադրության 65-ա հոդված):

Գերմանիայի սահմանադրությամբ զինված ուժերի կառավարման հարցում նման ոչ ավանդական կարգավորման գնալը մեծապես պայմանավորված է այն ներքաղաքական և արտաքին-քաղաքական վիճակով, որում գտնվում էր Գերմանիան սահմանադրությունն ընդունելիս: Նախ՝ սահմանադրությունը, որը ցայսօր գործում է, ընդունվել էր 1949 թ. Արևմտյան Գերմանիայում՝ Գերմանիայի

¹⁰ Ռուսաստանի սահմանադրության 87-րդ հոդվածի 1-ին մաս, ԱՄՆ-ի սահմանադրության 2-րդ հոդվածի 1-ին մաս, Ֆրանսիայի սահմանադրության 15-րդ հոդված, Լիտվայի սահմանադրության 140-րդ հոդվածի 3-րդ մաս, Սլովակիայի սահմանադրության 102-րդ հոդվածի 1-ին մասի “k” կետ, Իտալիայի սահմանադրության 87-րդ հոդվածի 9-րդ մաս, Չեխիայի սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի “c” կետ, Հունաստանի սահմանադրության 45-րդ հոդված:

Դաշնային Հանրապետությունում՝ Դաշնակից պետությունների օկուպացիոն ուժերի համակարգմամբ, որպիսի հանգամանքն ուղղակիորեն ազդել է Գերմանիայի սահմանադրության՝ հատկապես զինված ուժերի կազմավորման և գործունեության հիմունքների մասի բովանդակության վրա: Սահմանադրության հեղինակների նպատակն է եղել ամրագրել Երկրորդ աշխարհամարտում պարտված Գերմանիայի զինված ուժերի այնպիսի կարգավիճակ և կառավարման այնպիսի համակարգ, որը կսահմանափակեր Գերմանիայի ռազմական ներուժի շուտափույթ վերականգնման հնարավորությունն ու գործունեության արդյունավետությունը: Բացի այդ, զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի ինստիտուտի «անդամահատումը» և միայն ռազմական դրության ժամանակ պահպանումը՝ այն էլ դրա վերապահումը ոչ թե պետության գլխին, այլ զգալիորեն ավելի քաղաքականացված-կուսակցականացված վարչապետին՝ խորհրդարանական ուժեղ վերահսկողությամբ և սահմանափակող կառուցակարգերով, ուներ նաև քաղաքական-հոգեբանական նշանակություն՝ գերմանական հասարակության մեջ չեզոքացնելով ուժեղ ազգային-ռազմական առաջնորդի կերպարը, որն ակներևաբար մեծ ազդեցություն կունենար Գերմանիայի ռազմական ռեսուրսների մոբիլիզացման վրա:

Նույն պատճառներն են թաքնված նաև Երկրորդ աշխարհամարտում պարտված մեկ այլ պետության՝ Ճապոնիայի զինված ուժերի սահմանադրական սահմանափակումների, կարելի է ասել անգամ չեզոքացման հետևում:

Զինված ուժերի աստիճանակարգության մեջ հիմնարար կարևորություն ունի զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի ինստիտուտը: Վերջինս մեկտեղում է զինված ուժերի կառավարման ռազմական և քաղաքական բաղադրիչները, երբ պետության քաղաքական ղեկավարը հանդիսանում է նաև ռազմապաշտպանական ուժերի ղեկավարն ու գլխավոր քաղաքական պատասխանատուն: Պետության ղեկավարը՝ որպես զինված ուժերի գլխավոր հրամանատար, ապահովում է կապը քաղաքական իշխանության (քաղաքական պլանավորման գործառույթ) և զինված ուժերի մասնագիտական ղեկավարման (քաղաքական որոշումների կատարման գործառույթ) միջև և ի պաշտոնե զինված ուժերի ղեկավարման ռազմական և քաղաքական բաղադրիչների ներդաշնակ գործառման երաշխավորն է:

Վերոնշյալ և այլ, մասնավորապես, եվրոպական պետությունների օրինակները ցույց են տալիս, որ գլխավոր հրամանատարի ինստիտուտը որպես կանոն մշտամնա բնույթ ունի, այն է՝ գործում է խաղաղ և պատերազմական ժամանակներում:¹¹ Դա թույլ է տալիս որոշակիացնել և կանխատեսելի դարձնել ռազմոլորտում գործող հարաբերությունները և զերծ պահել զինված ուժերը տարբեր իրավիճակներում կարգապահության և աստիճանակարգության տարբեր ռեժիմներով պայմանավորված անկայունությունից:

¹¹ Բաղդասարյան Սասուն, Պաշտպանության ոլորտում հարաբերությունների սահմանադրական կարգավորման իրավական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոսություն, Երևան, 2020, էջ 104:

Բացի այդ, զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը մեծամասամբ տվյալ պետության գլուխն է, քանզի բացի քաղաքական առաջնորդից նաև ի պաշտոնե պետական առաջնորդ է և ունի նաև հասարակությունն ու պետությունը կոնսոլիդացնող բնույթ:

Այս համատեքստում հատուկ հետաքրքրություն է ներկայացնում ԱՄՆ-ի դոկտրինը Նախագահի ինստիտուտի՝ որպես գերագույն գլխավոր հրամանատարի կարգավիճակի վերաբերյալ: Այսպես՝ ամերիկացի քաղաքագետ Ք. Ռոսիթերը գտնում է, որ պատերազմական իրավիճակն օբյեկտիվորեն ուժեղացնում է գործադիր իշխանությանը, և այս պայմաններում ժողովրդի կողմից ընտրված մեկ բարձրագույն պաշտոնյայի առկայությունը, ով ունակ է և լիազորված է ստանձնել պատասխանատվությունը երկրի կառավարման համար, խիստ կարևորվում է: Ավելին՝ հատկապես նման դեպքերում նախագահի հեղինակությունն աճում է, և նա դառնում է այն մարդը, ում շուրջը համախմբվում է ողջ քաղաքական համակարգը և ժողովուրդը:¹²

«Պատերազմները վերակազմավորում են պետական իշխանությունը, հանգեցնում տարբեր պետական ինստիտուտների միջև լիազորությունների վերաբաշխմանը», - գրում է քաղաքագետ Ու. Հաուելը:¹³ Վերջինս նշում է նաև, որ երկրի անվտանգությանն սպառնացող իրավիճակներում ներառական, բանավեճային, մասնակցային ժողովրդավարական ընթացակարգերը որոշ չափով իրենց տեղը զիջում են անձնակենտրոն որոշումներին և օպերատիվ կառավարմանը, որի սուբյեկտը նախագահն է:¹⁴

Այսպիսով, ամերիկացի հեղինակների կողմից կարևորվում է պատերազմական իրավիճակներում երկրի անվտանգության երաշխավորի հստակ սուբյեկտայնությունը և նրան վերագրվող քաղաքական պատասխանատվությունը: Այսպես կոչված «deliberative democracy»-ն՝ մասնակցային, «բանավեճային» ժողովրդավարությունը, պետության համար սպառնալից պահերին կարող է ավելորդ ռիսկերի աղբյուր դառնալ, երբ խորհրդարանում միջկուսակցական հակասություններն ու բանավեճերը կոնկրետ իրավիճակում ընդունվելիք որոշման շուրջ, այդ թվում՝ զինված ուժերի ղեկավարման և օգտագործման կապակցությամբ կարող են ուշացնել անհրաժեշտ քայլերի կատարումը և անորոշեցնել քաղաքական պատասխանատվությունը համապատասխան գործողությունների համար: Այս իմաստով, իհարկե, ուժեղ նախագահի ինստիտուտն ունի իր առավելությունները: Որպես զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար՝ նախագահն է պատասխանատու պետության անվտանգության և տարածքային ամբողջականության համար՝ այդպիսով այս ոլորտում առարկայացնելով քաղաքական պատասխանատվությունը:

Այս հայեցակարգային եզրահանգմանն է եկել նաև ԱՄՆ-ի գերագույն դատարանը: Վերջինս ուժեղ նախագահի՝ որպես պատերազմական իրավիճակներում երկրի

¹² Rossiter, Clinton. *The American Presidency*. London: Hamish Hamilton, 1957, pp. 82-111.

¹³ Howell, William G. *Wartime Judgments of Presidential Power: Striking Down but Not Back*. *Minnesota Law Review*, 2008, p. 1782.

¹⁴ Նշվ. աշխ., pp. 1778-1818.

անվտանգության հիմնական երաշխավորի դերը դիտարկել է, այսպես կոչված, *crisis jurisprudence* կամ «ճգնաժամային դատական վերահսկողություն» հասկացության շրջանակներում, որի համաձայն՝ պատերազմական դրության ժամանակ նախագահի իշխանությունը կարող է լինել գերակա խորհրդարանի նկատմամբ, և նախագահը պատասխանատվություն է կրում ոչ միայն որպես գերագույն գլխավոր հրամանատար զինված ուժերը ղեկավարելու, այլև պատերազմը հաղթական ավարտին հասցնելու համար: Հետևաբար, ուժեղ նախագահի ինստիտուտը, որը ռազմական դրության ժամանակ օժտված է ընդարձակ լիազորություններով, իրավաչափ է:¹⁵

Մյուս կողմից, նույնիսկ օրհասական պահերին ժողովրդավարական ընթացակարգերին հավատարմությունը կարևոր է, քանի որ այդպիսով ձևավորվում են այն անհրաժեշտ նվազագույն հիմքերը, որոնք օգնում են, որպեսզի նախագահի գործադիր-իշխանական լիազորություններն իր կողմից չչարաշահվեն և չօգտագործվեն անձնական-կոնյուկտուրային նպատակներով: Հետևաբար, խորհրդարանական վերահսկողությունը գործադիր իշխանության նկատմամբ ևս էական նշանակություն ունի ռազմական իրավիճակներում երկրի սահմանադրական կարգի անվտանգության լիարժեք ապահովման համար: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է խորհրդարանի կողմից ռազմական և արտակարգ դրության իրավական ռեժիմների մասին օրենքների ընդունմանը, խորհրդարանի՝ նախագահի կողմից հայտարարված ռազմական դրության և (կամ) ձեռնարկված միջոցառումների օրինականության և հիմնավորվածության ստուգմանը և այլն: Նման լիազորություններով օժտված է նաև ԱՄՆ-ի Կոնգրեսը:

Ռազմական դրության ժամանակ, ինչպես ցույց է տալիս ԱՄՆ-ի փորձը, գերագույն գլխավոր հրամանատար նախագահի և ընդհանրապես, գործադիր իշխանության դիրքերն ավելի են ամրապնդվում, իսկ լիազորությունները դառնում են առավել ընդգրկուն՝ իրավաքաղաքական պատասխանատվության և կարգապահության համահունչ մեծացմամբ:

Զինված ուժերում հրամանատարական ուղղահայացի հաջորդ կարևոր գործոնը մասնագիտական կառավարման սուբյեկտների՝ պաշտպանության նախարարի և գլխավոր շտաբի պետի փոխհարաբերություններն են: Վերջիններս կազմում են բանակի մասնագիտական և օպերատիվ կառավարման և ղեկավարման առանցքային գործոնը, որի պատշաճ և արդյունավետ կառուցակարգումը բանակային ուղղահայաց կառավարման գործառութային հենակետն է: Ընդ որում, այս երկու ինստիտուտի հարաբերակցության ցանկացած մոդել պետք է հարմարեցված լինի բանակի միասնական կառավարման համակարգի պահանջներին և կարիքներին:

Պաշտպանության նախարարությունն իրականացնում է զինված ուժերի համակարգի քաղաքական կառավարումը, իսկ զինված ուժերի գլխավոր շտաբը պատասխանատու է բանակի օպերատիվ ղեկավարման համար՝ ներառյալ մարտական օպերացիաների մշակումը և իրականացումը, զինվորականության մարտական պատրաստվածությունը, զորահավաքային պլանավորումը,

¹⁵ Howell, William G., նշվ. աշխ., pp. 1795-1818.

ռազմական հետախուզությունն ու հակահետախուզությունը և այլն:¹⁶ Պաշտպանության նախարարությունը, պաշտպանության նախարարի գլխավորությամբ, կառավարության կազմում մասնակցում է պաշտպանական քաղաքականության մշակմանը, որը հիմնված է խորհրդարանի կողմից ընդունված համապատասխան օրենքների վրա: Դրանից հետո արդեն պաշտպանության նախարարությունն ապահովում է զինված ուժերում երկրի պաշտպանական քաղաքականության իրականացումը՝ ներառյալ զինված ուժերի գլխավոր շտաբի կողմից: Պաշտպանության նախարարության այս գործառնությունն ընդգրկում է նաև վերահսկողությունը զինված ուժերի գլխավոր շտաբի կամ համանման գործառնություններ իրականացնող մարմնի գործունեության օրինականության և հիմնավորվածության նկատմամբ:

Ուստի՝ որքան էլ զինված ուժերի գլխավոր շտաբը կամ նմանատիպ գործառնություններ իրականացնող այլ մարմինն ունի ինքնուրույն լիազորություններ, այն զինված ուժերի աստիճանակարգության մեջ հաջորդում է պաշտպանության նախարարությանը: Վերջինս հանդիսանում է պաշտպանական քաղաքականության մշակմանը մասնակցող և այդ քաղաքականության իրացումն ապահովող, իսկ զինված ուժերի գլխավոր շտաբը՝ այդ քաղաքականությունը գործնականում կենսագործող մարմին:¹⁷ Այս կամ այն կերպ գործառնությանն նման տարանջատվածությունն ու ենթակայությունը, անկախ կառուցակարգային լուծումներից, կիրառվում է աշխարհի՝ ռազմական իմաստով կայացած պետություններում՝ Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Ռուսաստանում, Գերմանիայում, Իտալիայում և այլուր: Սա բխում է պաշտպանական ոլորտի կառավարման գերկենտրոնացվածությունից, օրինաչափ է և հիմնված է ոլորտի կառավարման ստորին մակարդակների սկզբունքներից:¹⁸ Ընդ որում, ինչպես վկայում է պետությունների վերոնշյալ ցանկը, պաշտպանական քաղաքականության մշակման և իրացման գործառնությունների և ինստիտուտների տարանջատումը և առաջինին երկրորդի ստորադասումը՝ որպես սկզբունք, կիրառվում է կառավարման տարբեր ձևեր ունեցող պետություններում՝ խորհրդարանական միապետություններում, խորհրդարանական հանրապետություններում, նախագահական և կիսանախագահական կառավարման համակարգով երկրներում:

Զինված ուժերի ճարտարապետության ևս մեկ կարևոր ինստիտուտը ռազմա-պաշտպանական որոշակի գործառնություններ ունեցող հատուկ կոլեգիալ մարմինն է,

¹⁶ Բաղդադիայի Մասուն, նշվ. աշխ., էջ 54:

¹⁷ UK Ministry of Defence, How Defence Works, 2020, pp. 1-40, https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/920219/200922-How_Defence_Works_V6.0_Sep_2020.pdf

¹⁸ Նշվ. աշխ.,

Конституция Российской Федерации. Проблемный комментарий. Отв. ред. В.А. Четвернин. М., 1997, с. 186-195,

Конституция Федеративной Республики Германия. Статьи 65-а, 115-б. Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин. М., издательство «Юрлитинформ», 2008, с. 146, 162,

Армия США: история становления, 1. Общая структура армии США, 29 ապրիլի 2019 թ., https://militaryarms.ru/armii-mira/armiya-ssha/#h2_1

որը տարբեր երկրներում ունի տարբեր անվանումներ. Հայաստանում՝ Անվտանգության խորհուրդ, Իտալիայում՝ Պաշտպանության բարձրագույն խորհուրդ, Ռուսաստանում՝ Անվտանգության խորհուրդ, Հունգարիայում՝ Ազգային Պաշտպանության խորհուրդ, Բրազիլիայում՝ Ազգային պաշտպանության խորհուրդ և այլն: Կան պետություններ, որոնց սահմանադրորեն ամրագրված գործադիր-ռազմական համակարգում այդպիսի մարմինը բացակայում է, օրինակ՝ Գերմանիայում:

Քննարկվող պետական մարմինը կարող է ունենալ տարբեր գործառույթներ և կարգավիճակ՝ խորհրդակցական-համակարգող կամ իշխանական լիազորություններ ունեցող: Իտալիայում Պաշտպանության բարձրագույն խորհուրդն ունի խորհրդակցական-համակարգող բնույթ: Այն տեղեկատվության փոխանակման և ինստիտուցիոնալ փոխգործակցության հարթակ է երկրի պաշտպանության և անվտանգության ապահովման գործառույթ իրականացնող պետական մարմինների և պաշտոնատար անձանց միջև: Խորհուրդը գլխավորում է Իտալիայի նախագահը, ով երկրի գերագույն գլխավոր հրամանատարն է, իսկ անդամներ են նաև վարչապետը, արտաքին գործերի, պաշտպանության, ներքին գործերի, էկոնոմիկայի և ֆինանսների նախարարներն ու զինված ուժերի գլխավոր շտաբի պետը: Պաշտպանության բարձրագույն խորհուրդը՝ որպես այդպիսին, գործադիր-կարգադրիչ լիազորություններ չունի և հանդիսանում է խորհրդատվական-խորհրդակցական մարմին, որն ապահովում է Նախագահին զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի գործառույթն իրականացնելու համար անհրաժեշտ ռազմական, օպերատիվ և անվտանգային տեղեկատվությամբ և թույլ է տալիս իրավասու գերատեսչություններին համաձայնեցնել և համակարգել իրենց գործողություններն Իտալիայի պաշտպանության և անվտանգության ոլորտներում:¹⁹

Բրազիլիայում, որը հանդիսանում է գերնախագահական հանրապետություն, Ազգային պաշտպանության խորհուրդը Հանրապետության նախագահին կից խորհրդակցական մարմին է, որի կազմի մեջ մտնում են փոխնախագահը, Պատգամավորների պալատի նախագահը, Դաշնային խորհրդի նախագահը, արդարադատության, ռազմական, արտաքին գործերի և պլանավորման նախարարները:²⁰

Հունգարիայում Ազգային պաշտպանության խորհուրդն ad hoc պետական մարմին է, որը ձևավորվում է պատերազմի կամ ռազմական հարձակման անմիջական վտանգի դեպքում: Այդ խորհուրդը հատուկ մարմին է, որն ընդունում է որոշում զինված ուժերը երկրի ներսում և արտասահմանում օգտագործելու մասին, օրենքով նախատեսված արտակարգ միջոցառումների ձեռնարկման մասին: Խորհուրդը գլխավորում է նախագահը, իսկ անդամակցում են Պետական ժողովի (խորհրդարանի) նախագահը, Պետական ժողովում ներկայացված կուսակցությունների խմբակցությունների ղեկավարները, վարչապետը,

¹⁹ The Code of Military Ordinances – Legislative Decree N. 66 of 15 March 2010.

²⁰ Բրազիլիայի սահմանադրություն, 91-րդ հոդված, https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/brazil/brazil-e.htm

նախարարները, ինչպես նաև զինված ուժերի գլխավոր շտաբի պետը՝ որպես խորհրդատու: Պաշտպանության պետական խորհուրդն իրավունք ունի իրականացնել Պետական ժողովի կողմից իրեն փոխանցված լիազորությունները, Հանրապետության նախագահի և կառավարության լիազորությունները:²¹ Այն կարող է հրապարակել որոշումներ, որոնք կասեցնում են որոշ օրենքների կիրառումը, շեղվում են օրենքների նորմերից: Այն կարող է ձեռնարկել այլ արտակարգ միջոցներ, սակայն չի կարող կասեցնել Սահմանադրության գործողությունը: Արտակարգ դրության ժամանակ սահմանադրական դատարանի գործունեությունը չի կարող սահմանափակվել:²²

Անվտանգության խորհրդի կամ այլ անվանում ունեցող պետական համանման մարմնի գոյությունը մի կողմից արդարացված է, քանի որ պետության պաշտպանությունն ու անվտանգությունը սահմանադրական կարգի և պետության լինելիության հիմնարար երաշխիքներից են, որոնց ապահովումն ընդգրկում է պետական ամենատարբեր ինստիտուտներ և պահանջում է նրանց սինխրոնացված գործունեությունը՝ թե՛ տեղեկատվության փոխանակման, թե՛ փոխօգնության և թե՛ համատեղ գործողությունների տեսքով: Նախևառաջ սրան է ուղղված քննարկվող կոլեգիալ մարմնի գործառումը: Մյուս կողմից՝ կան երկրներ, որտեղ այդ խորհուրդը նմանվում է «փոքր կաբինետի», որտեղ ընդունվում են պարտադիր կատարման ենթակա նորմատիվ որոշումներ: Վերջին դեպքում ռիսկ է առաջանում, որ ռազմա-պաշտպանական ոլորտում կգործեն երկու զուգահեռ ինստիտուտներ՝ ի դեմս կառավարության (նախագահական և կիսանախագահական հանրապետություններում՝ նաև նախագահի) և խորհրդի: Վերջինս, չունենալով ժողովրդավարական լեգիտիմության կառավարության և նախագահի հետ համադրելի աստիճան, իրականացնելու է նրանց վերապահված գործառույթներ: Սա խնդիր է, որն առաջացնում է հարցեր՝ կապված իշխանությունների տարանջատման սկզբունքի պատշաճ իրացման, խորհրդի հանրային և քաղաքական հաշվետվողականության և կառավարության (նախագահի) ու խորհրդի լիազորությունների կրկնորդմամբ պայմանավորված՝ ինստիտուցիոնալ ճգնաժամի առաջացման հետ:

Այսպիսով, զինված ուժերի աստիճանակարգային կառավարման մասով իր էությամբ խորհրդակցական-խորհրդատվական բնույթ ունեցող քննարկվող մարմնին գործադիր-կարգադրիչ լիազորությունների վերապահումը կառավարման ապակենտրոնացման և զինված ուժերի ենթակայական հարաբերությունները խաթարելու վտանգ է պարունակում: Ավելին՝ զինված ուժերի համակարգի կառուցակարգումն ու գործառութավորումը, ինչպես վկայում է համաշխարհային փորձը, միտված է լիազորությունների կենտրոնացմանն ու իշխանական անխախտելի ուղղահայացի ձևավորմանը: Դա ապահովում է պետաիշխանական համակարգի ձկունությունն ու ընդունվող որոշումների օպերատիվությունը հատկապես պատերազմական իրավիճակներում: Օրինակ՝ Գերմանիայում ռազմական դրության ժամանակ անգամ դաշնային խորհրդարանն

²¹ Հունգարիայի սահմանադրության 49-րդ հոդված, https://hunconcourt.hu/uploads/sites/3/2021/01/thefundamentallawofhungary_20201223_fin.pdf

²² Հունգարիայի սահմանադրության 54-րդ հոդվածի 2-րդ մաս:

է փոխակերպվում միավորված կոմիտեի, որը կարող է փոխարինել օրենսդիր մարմինն, համանման կառուցակարգեր են գործում նաև Շվեդիայում: Իտալիայում և Ֆրանսիայում ռազմական դրության ընթացքում խորհրդարանի օրենսդրական լիազորությունները կարող են փոխանցվել գործադիր իշխանությանը՝ կրկին միագիծ և հստակ արտակարգ կառավարում իրականացնելու նպատակով՝ խուսափելով խաղաղ ժամանակ նորմալ համարվող միջինստիտուտային մրցակցությունից և դրանով պայմանավորված՝ կարևոր քաղաքական որոշումների ընդունման ձգձգումից կամ հետաձգումից:²³ Մինչդեռ, եթե նշյալ խորհուրդն ունի պաշտպանության ոլորտում քաղաքականաստեղծման գործառույթ, ինչպես Հունգարիայում, Հայաստանում և այլուր, այն դառնում է որոշումների կայացման այլընտրանքային կենտրոն՝ բարդացնելով պատերազմական իրավիճակում կամ խաղաղ բանակաշինության ժամանակ պետական քաղաքականության կենսագործումը:

Վերոնշյալ նյութից ելնելով՝ կարող ենք եզրահանգել, որ զինված ուժերի համակարգում արդյունավետ կառավարում ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ համաստորադասության և ենթակայության հնարավորինս պարզ և հստակ ուղղահայաց, որը, ներդաշնակեցնելով իշխանությունների տարանջատմամբ գործող պետական կենտրոնական մարմինների գործունեությունը բուն ռազմական կառավարման մարմինների հետ, երաշխավորում է մի կողմից քաղաքական իշխանության՝ նախագահի և (կամ) կառավարության ղեկավար դերը, իսկ մյուս կողմից՝ քաղաքական իշխանությունից ելնող կարգադրագրերի անշեղ կատարումն ու մասնագիտական ապահովումը միմյանց միջև սուբորդինացիոն կապի մեջ գտնվող զինվորական պաշտոնատար անձանց կողմից:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգավիճակի և կառավարման սահմանադրական խնդիրները

Հայաստանում 2015 թ. տեղի ունեցած սահմանադրական փոփոխությունների առանցքային կետերից մեկը ռազմա-պաշտպանական ոլորտի կառավարման մոդելի արմատական վերանայումն էր, որին փորձ է արվել տալ կառավարման խորհրդարանական ձևից բխող կոլեգիալություն: Արդյունքում պաշտպանության համակարգում միաբևեռ կառավարման փոխարեն ներդրվեց բազմաբևեռ կառավարում: Վերջինս էական ազդեցություն ունեցավ զինված ուժերի սահմանադրական կարգավիճակի վրա՝ մեծացնելով դրանց ներքին և արտաքին

²³ Գերմանիայի Սահմանադրության 53-а հոդվածը, 115-Н հոդվածի 1-2 մասերը, https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/germany/german-e.htm, Конституции зарубежных стран. Сборник. Сост. В.Н. Дубровин. М., издательство «Юрлитинформ», 2008, с. 76, 78, 382-391, Շվեդիայի սահմանադրություն, գլուխ 13, §2, §3, https://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/sweden/sweden-e.htm, Ардан Филипп, Франция: государственная система: пер. с франц. М.: Юрид. лит., 1994, с. 87-89.

խոցելիության ռիսկերը և բարդացնելով ներքին կառավարման և պետական այլ ինստիտուտների հետ փոխազդեցության կառուցակարգերը: Ավելին՝ մեր դիտարկմամբ, զինված ուժերի ապակենտրոն կառավարման համակարգը կարող է բացասական լուրջ խթան հանդիսանալ զինված ուժերի քաղաքական չեզոքության խախտումների համար:

Նախորդիվ արդեն իսկ ամփոփ կերպով վերլուծվեց զինված ուժերի ինստիտուցիոնալ կառավարման համակարգը. եզրակացությունն այն է, որ զինված ուժերի ղեկավարման կոլեգիալ մոդելի ներդնումը բանակում, ի տարբերություն պետական այլ ինստիտուտների, ոչ միայն չի նպաստում զինված ուժերի մարտունակության ու կարգապահության բարձրացմանը, այլև կարող է վտանգել զինված ուժերի հիմնական սահմանադրական պարտականության՝ ՀՀ պաշտպանության և անվտանգության պահովման պատշաճ իրականացումը: Սա, բնականաբար, վտանգավոր է ողջ քաղաքական համակարգի համար, քանի որ վերջինիս բնականոն գործառնական կարևոր երաշխիքներից մեկն ինստիտուցիոնալ և կազմակերպական առումներով թուլանում է:

Այսպես՝ ինչպես վերը նշվեց, ՀՀ Սահմանադրությամբ նախատեսվում է զինված ուժերի համակարգի միանգամայն նոր ճարտարապետություն, որի հիմքում պաշտպանության ոլորտի հիմնական լիազորությունների ապակենտրոնացումն է մի քանի իշխանական սուբյեկտների միջև, որպեսզի մեկ անձի կամ ինստիտուտի ձեռքբերում չկենտրոնանա ռազմական իշխանության «հսկիչ փաթեթը»:

Ըստ այդմ, խաղաղ ժամանակ Հայաստանում չի գործելու զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի ինստիտուտը, որը կիսանախագահական և նախագահական համակարգերում Նախագահի իշխանության կարևորագույն ատրիբուտներից է և հաճախակի հանդիպում է նաև խորհրդարանական հանրապետություններում՝ դասվելով նախագահի ավանդական գործառույթների թվին: Փոխարենը՝ զինված ուժերի կառավարման ոլորտում լիազորությունները բաշխվել են 5 ուժային կենտրոնների՝ վարչապետի, կառավարության, Անվտանգության խորհրդի, պաշտպանության նախարարի և զինված ուժերի գլխավոր շտաբի պետի միջև: Նախագահի դերակատարումն այստեղ առավելապես հանգում է Պաշտպանության նախարարի և զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմի նշանակման և արձակման ընթացակարգերի սահմանադրականության ստուգմանը՝ համապատասխան հրամանագրերը չստորագրելու (որի դեպքում Սահմանադրությամբ նախատեսված ժամկետն անցնելուց հետո հրամանագիրն իրավունքի ուժով մտնում է ուժի մեջ) կամ համապատասխան նշանակման կամ ազատման հարցով Սահմանադրական դատարան դիմելու ձևով:

Անվտանգության խորհուրդը, որի կազմավորման կարգը, լիազորություններն ու գործունեության կարգը նախատեսված են ոչ թե Սահմանադրությամբ, այլ օրենքով, ըստ էության, պաշտպանության և անվտանգության ոլորտի քաղաքականության մշակողն է, այս ոլորտում օպերատիվ քննարկումների հիմնական հարթակը և իրենից ներկայացնում է ոչ միայն խորհրդակցական, այլև իշխանագործ որոշումներ կայացնող մարմին: Այն կազմված է ուժային և

քաղաքական հիմնական մարմինների ղեկավարներից: Մասնավորապես, «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ Անվտանգության խորհրդի անդամներ են Վարչապետը, Փոխվարչապետները, Անվտանգության խորհրդի քարտուղարը, Պաշտպանության նախարարը, Արտաքին գործերի նախարարը, Ազգային անվտանգության ծառայության տնօրենը, Ոստիկանության պետը, Զինված ուժերի գլխավոր շտաբի պետը:

Անվտանգության խորհրդի սահմանադրական կարգավիճակը խնդրահարույց է, քանի որ պաշտպանության ոլորտում այն զգալի մասով «փոխարինում է» Կառավարությանը: Այսպես՝ փոփոխված Սահմանադրության 146-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Կառավարությունը գործադիր իշխանության բարձրագույն մարմինն է: Կառավարությունն իր ծրագրի հիման վրա մշակում և իրականացնում է պետության ներքին և արտաքին քաղաքականությունը: Միննույն ժամանակ փոփոխված Սահմանադրության 155-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պաշտպանության ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները սահմանում է Անվտանգության խորհուրդը: Այս երկու դրույթի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ պաշտպանության ոլորտում Կառավարությունը չի իրականացնում քաղաքականության մշակում, չնայած սահմանադրորեն հանդիսանում է գործադիր իշխանության բարձրագույն մարմինը և ունի պետության ներքին և արտաքին քաղաքականությունը մշակելու մենաշնորհ: Դրա փոխարեն՝ երկրի պաշտպանական ոլորտի քաղաքականության հիմնական ուղղությունները մշակում է Անվտանգության խորհուրդը: Այստեղ առկա է որոշակի հակասություն. եթե գործադիր իշխանության բարձրագույն մարմինը կառավարությունն է, որը հանդիսանում է քաղաքականաստեղծ մարմին, ապա ինչպե՞ս կարող է պաշտպանության ոլորտի քաղաքականության մշակումն իրականացվել թեկուզ վարչապետի գլխավորած, սակայն բոլորովին այլ կառույցի կողմից: Պրակտիկայում այս տարբերությունը կարող է հանգեցնել Կառավարության և Անվտանգության խորհրդի լիազորությունների կոլիզիայի և նշված մարմինների կողմից միմյանց լիազորությունների կրկնորդման, ինչը հղի է սահմանադրական կարգի խաթարման լուրջ ռիսկերով: Բացի այդ, խորհրդարանական կառավարման համակարգի հիմնական փիլիսոփայությունը կայանում է օրենսդիր իշխանության կողմից կառավարության և գործադիր իշխանության առանցքային այլ մարմինների ձևավորման ու խորհրդարանի առջև դրանց հաշվետվողականության մեջ: Այս հանգամանքը տեղ է գտել նաև փոփոխված Սահմանադրության 88-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմամբ: Սահմանադրության տեքստի ուսումնասիրությունը գալիս է վկայելու, որ Ազգային ժողովի կողմից գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողությունը հիմնականում հանգում է կառավարության նկատմամբ վերահսկողության՝ վերջինս ձևավորելու, արձակելու և Կառավարության ընթացիկ գործունեությունը մշտադիտարկելուն ուղղված լիազորությունների միջոցով: Նույնը չի կարելի ասել խորհրդարանի և Անվտանգության խորհրդի փոխհարաբերությունների մասին. կարելի է անգամ եզրահանգել, որ

խորհրդարանն Անվտանգության խորհրդի գործունեությունը կարող է չվերահսկել, քանի որ Սահմանադրությամբ սահմանված չէ ո՛չ Անվտանգության խորհրդի կազմը, ո՛չ դրա ձևավորման և ո՛չ էլ պետական այլ մարմինների հետ հարաբերակցության կարգը: Այսինքն՝ ընթացիկ օրենսդրությամբ, ելնելով քաղաքական և այլ շահերից կամ պատճառներից, միանգամայն հնարավոր է սահմանել Անվտանգության խորհրդի ձևավորման այնպիսի կարգ, որ Անվտանգության խորհուրդը որևէ կերպ հաշվետու չլինի խորհրդարանին: Նման իրավիճակում կիսաթարվեն ներսահմանադրական հավասարակշռության կառուցակարգերը, և խորհրդարանական կառավարման համակարգի կայացման հեռանկարը Հայաստանում լրջորեն կվտանգվի:

Թեպետ Անվտանգության խորհրդի հայաստանյան մոդելին նման մոդելներ կան որոշ այլ երկներում, ինչի մասին նախորդիվ խոսվել է, այդուհանդերձ՝ այդ մոդելն ունի մեր կողմից նշված խնդիրները և, իրավամբ, կարող է ճգնաժամային իրավիճակներ առաջացնել:

Ուստի՝ գտնում ենք, որ Անվտանգության խորհրդի սահմանադրական կարգավիճակը պետք է վերանայվի, որպեսզի հաղթահարվի պաշտպանության ոլորտում քաղաքականության մշակման գործընթացում Կառավարության հետ մրցակցությունը, ինչը հատկապես ռազմական բախումների մշտական սպառնալիքի ներքո գտնվող Հայաստանի պարագայում կարող է դառնալ զինված ուժերի կառավարման լուրջ խոչընդոտ: Ավելին՝ լիազորությունների նման կրկնորդումը հակասում է նաև պետական իշխանության սահմանադրական կառուցակարգերի տրամաբանությանը, քանի որ պաշտպանության քաղաքականությունը հանդիսանում է գործադիր քաղաքականության բաղկացուցիչ մասը, որը մտնում է Կառավարության իրավասության մեջ՝ խորհրդարանի վերահսկողության պայմաններում: Անվտանգության խորհրդին նման լիազորություններով օժտելու նպատակահարմարությունը կասկածելի է թվում թե՛ փոփոխված Սահմանադրության կառուցակարգային համակարգի տրամաբանության տեսանկյունից և թե՛ ելնելով զինված ուժերի օպտիմալ կառավարման համակարգ ունենալու անհրաժեշտությունից: Շատ ավելի արդյունավետ կլինեք պաշտպանության ոլորտում քաղաքականաստեղծ գործառույթը վերապահել բացառապես Կառավարությանը, իսկ օպերատիվ որոշումների կայացումը՝ ոլորտային արհեստավարժներին՝ Պաշտպանության նախարարին և Զինված ուժերի գլխավոր շտաբի պետին:

Ընդհանուր առմամբ, գտնում ենք, որ Անվտանգության խորհրդի և նմանատիպ կիսախորհրդատվական մարմինների կազմավորման նպատակահարմարությունը կարող է վերանայվել, քանի որ կառավարման արդյունավետության հրամայականը հուշում է ունենալ հնարավորինս պարզ, համակարգի օղակների լիազորությունների բնույթի և բաշխման իմաստով հստակ, կրկնորդումից զերծ և հաշվետվողականության ու պատասխանատվության գործունե երաշխիքներով համակարգ, որը հնարավորինս զերծ կլինի ոչ հստակ, կրկնվող լիազորություններով մարմիններից: Նման մոտեցումը բխում է ժամանակակից կառավարման գիտության և պրակտիկայի մեթոդաբանությունից: Մասնավորապես, ըստ կառավարման փորձագետ Վ.Գ.Սպիրինի, կառավարման

համակարգի օղակներից յուրաքանչյուրին պետք է վերապահված լինեն միայն այդ օղակին վերաբերող հստակ խնդիրներ, գործառույթներ և լիազորություններ: Միմյանց լիազորությունների կրկնորդումը կառավարման համակարգի տարբեր սուբյեկտների և հատկապես վերադաս և ստորադաս մարմինների կողմից բացասաբար է ազդում աշխատանքի որակի և վերահսկողության արդյունավետության վրա:²⁴ Իսկ այնպիսի զգայուն ոլորտում, ինչպիսին պաշտպանությունն է, կառավարման հարաբերությունների բարդ համակարգը, պետական ինստիտուտների, տվյալ դեպքում՝ Կառավարության և Անվտանգության խորհրդի միջև լիազորությունների կրկնորդումը, օբյեկտիվորեն ձևավորում են կոնֆլիկտաստեղծ իրավիճակ և կարող են բացասաբար ազդել երկրի պաշտպանունակության վրա:

Բոլոր դեպքերում, հաշվի առնելով, որ Անվտանգության խորհրդի գործառնման անհրաժեշտության վերանայումը կամ լիազորությունների վերաբաշխումն առավելապես ապագայի խնդիր է, իսկ ներկայում օրախնդիր է ձևավորել Անվտանգության խորհրդի արդյունավետ, հաշվետու և այլ մարմինների հետ ներդաշնակ աշխատանքի նվազագույն կառուցակարգեր՝ եզրակացության մասում առաջարկում ենք կատարել որոշակի միջանկյալ փոփոխություններ:

Հարկ է անդրադառնալ նաև պաշտպանական համակարգի այլ սուբյեկտների փոխհարաբերություններին, քանի որ դրանք ևս խնդրահարույց են: Մասնավորապես, Անվտանգության խորհրդի կողմից մշակված պաշտպանական քաղաքականության հիմնական ուղղություններին համապատասխան՝ զինված ուժերի քաղաքական ղեկավարումն իրականացնում է Պաշտպանության նախարարը, իսկ զինվորական օպերատիվ կառավարումը՝ Գլխավոր շտաբի պետը: Պատերազմի ժամանակ Վարչապետը հանդիսանում է Ջինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարը: Կառավարությունը լիազորված է որոշում ընդունել զինված ուժերի օգտագործման մասին, իսկ անհետաձգելի իրավիճակներում Պաշտպանության նախարարի առաջարկով դա անում է Վարչապետը՝ այդ մասին անհապաղ տեղեկացնելով կառավարության անդամներին: Ընդ որում, զինված ուժերում աստիճանակարգության և լիազորությունների բաշխման մնացյալ հարցերը Սահմանադրությունը թողնում է օրենսդրի՝ Ազգային ժողովի հայեցողությանը:

Ակնհայտ է, որ զինված ուժերի քաղաքականության մշակման, իրացման և զինված ուժերի կառավարման հարցերում Սահմանադրությամբ խճճված և իրար հակասող լիազորությունների մի խճանկար է նախատեսված: Այս թնջուկի հանգուցալուծումը սահմանադրական մակարդակում գործնականում անհնար է: Բացի այդ, անգամ այն սահմանափակ տեղեկատվությունը, որը կարող ենք քաղել հիմնական օրենքից, շարունակում է առաջացնել նորանոր հարցեր: Օրինակ՝ ինչպե՞ս են բաշխվելու լիազորությունները Պաշտպանության նախարարի և Ջինված ուժերի գլխավոր շտաբի պետի միջև: Գործող Սահմանադրությամբ և

²⁴ Спирин В.Г. Распределение задач, полномочий и ответственности в организации, 2012, <https://cyberleninka.ru/article/n/raspredelenie-zadach-polnomochiy-i-otvetstvennosti-v-organizatsii>

օրենսդրությամբ նրանք երկուսն էլ զինված ուժերի կառավարումն իրականացնող բարձրագույն պաշտոնյաներ են:

Գործող օրենսդրությամբ նաև հնարավոր չի եղել հաղթահարել սահմանադրական մակարդակում զինված ուժերի կառավարման համակարգում առկա խնդիրները: Մասնավորապես, «Պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝

2. Ձինված ուժերի ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը:

3. Ձինված ուժերի անմիջական հրամանատարը զինված ուժերի գլխավոր շտաբի պետն է, որը հանդիսանում է զինված ուժերի զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը: Ոչ պատերազմական ժամանակ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը ենթակա է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին: Պատերազմի ժամանակ զինված ուժերի գլխավոր շտաբի պետը ենթակա է զինված ուժերի գերագույն հրամանատարին: Այդպիսի ուղիղ ենթակայությունը չի ձևափոխում զինված ուժերի գերագույն հրամանատարի կողմից չկարգավորված հարցերում զինված ուժերի ղեկավարումն իրականացնող և դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունն ապահովող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին զինված ուժերի գլխավոր շտաբի պետի ենթակայությունը:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Ձինված ուժերի գլխավոր շտաբը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է:

Մեջբերված և քննարկվող օրենքի այլ իրավադրույթները որոշակի պատասխան չեն տալիս այն հարցին, թե ինչ իրավական կառուցակարգերով է գործառվում Պաշտպանության նախարարության և Գլխավոր շտաբի հարաբերակցությունը: Օրինակ՝ եթե օրենսդիրը Գլխավոր շտաբը բնորոշել է որպես Պաշտպանության նախարարության կառավարման ոլորտում գործող, այսինքն՝ փաստացի ենթակա պետական մարմին, ինչպես է դա զուգահեռվում պատերազմական իրավիճակում Գլխավոր շտաբի պետի ինքնավար սահմանադրական կարգավիճակի հետ, որը բացառում է Պաշտպանության նախարարի որևէ վերադասություն:

Հասկանալի չէ նաև խաղաղ ժամանակ զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնի բացակայությունը: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 155-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումը, որով զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի կարգավիճակը վերապահվում է Վարչապետին միայն պատերազմի ժամանակ, առաջացնում է որոշակի անհստակություն, որը հղի է պաշտպանության ոլորտում իշխանական հարաբերությունների խաթարման լուրջ վտանգով:

Ի մասնավորի, Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ մասով Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության մշակման և իրականացման գործառույթը վերապահվում է Կառավարությանը, իսկ 152-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչապետը որոշում է Կառավարության

գործունեության հիմնական ուղղությունները, ղեկավարում է Կառավարության գործունեությունն ու համակարգում Կառավարության անդամների աշխատանքը՝ նրանց կոնկրետ հարցերով հանձնարարականներ տալու լիազորությամբ: Վարչապետը, փաստորեն, Կառավարության միանձնյա ղեկավարն է և, հաշվի առնելով Կառավարության կազմավորման և հրաժարականի սահմանադրական դրույթները, հենց վարչապետն է առաջնային քաղաքական պատասխանատվության սուբյեկտը Կառավարության գործունեության համար: Ակնհայտ է նաև, որ պաշտպանության քաղաքականությունն ու զինված ուժերի կառավարումը Կառավարության և ընդհանրապես, գործադիր իշխանության քաղաքականության հիմնական ուղղություններից մեկն է, որի իրականացման հիմնական պատասխանատուն կրկին վարչապետն է: Սույն համատեքստում զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի կարգավիճակն, ըստ էության, պետք է հանդիսանա գործադիր իշխանության ուղղահայացում Վարչապետի իրավաքաղաքական կարգավիճակի կառուցակարգային արտացոլումը պաշտպանության ոլորտի կառավարման համակարգում, որի տրամաբանական հետևանքը պետք է լիներ Վարչապետին զինված ուժերի գերագույն հրամանատարի կարգավիճակի սահմանադրական ամրագրումը՝ թե՛ խաղաղ և թե՛ պատերազմական իրավիճակների համար: Ավելին՝ խորհրդարանական ընտրություններում ընտրողների վստահության քվեն ստացած քաղաքական ուժի կողմից առաջադրված վարչապետի թեկնածուն ժողովրդի մանդատն ստանում է պետության ամբողջական կառավարման իրականացումն ապահովելու համար, որպիսի հանգամանքը հաշվետու կառավարման համար անհրաժեշտ է դարձնում գործադիր իշխանության համակարգի այնպիսի կառուցվածքի առկայությունը, որը կարտացոլի վարչապետի՝ որպես գործադիր իշխանության գործունեության առաջնային և ղեկավար քաղաքական պատասխանատուի իրավավիճակը, ինչը ևս օրախնդիր է դարձնում զինված ուժերի ղեկավարման ոլորտում վարչապետի կարգավիճակի վերանայումը: Հավելենք նաև, որ խորհրդարանական կառավարման համակարգ ունեցող պետությունների փորձը ցույց է տալիս, որ առավել նախընտրելի է համարվում զինված ուժերի կառավարման այնպիսի մոդելի ձևավորումը, որտեղ զինված ուժերի գերագույն հրամանատարի կարգավիճակը վերապահվում է մեկ կոնկրետ պետական ինստիտուտի՝ բոլոր դեպքերի համար և քաղաքական պատասխանատվության հստակ ծավալով (Բտալիա, Լատվիա և այլն):

Պակաս կարևոր չէ այն հանգամանքը, որ զինված ուժերի կառավարման համակարգն ունի ռազմաքաղաքական բնույթ, և բարձրագույն քաղաքական ղեկավարությունն ունի և՛ իրավունք, և՛ պարտականություն իրականացնել զինված ուժերի քաղաքական կառավարում, առանց որի դժվար է պատկերացնել զինված ուժերի ինստիտուցիոնալ ներդաշնակությունը և դրանց քաղաքական և մասնագիտական-ռազմական բաղադրատարրերի օպտիմալ զուգակցումը: Սա խնդիր է նաև բանակի և այլ ուժային կառույցների նկատմամբ քաղաքացիական վերահսկողության տեսանկյունից, որը ներառում է նաև ժողովրդավարական առաջնային մանդատ ստացած պետական ինստիտուտի կողմից ռազմական կառավարման ուղղահայացի գլխավորումը՝ այդպիսով կառավարելի դարձնելով

բանակի՝ քաղաքական չոգոքության պահանջի խախտման և հակաժողովրդավարական գործընթացներին երբևէ ներգրավվելու օբյեկտիվ ռիսկերը:

Եզրակացություն

Վերոնշյալ իրավական և փաստական նյութի շարադրանքը ցույց է տալիս, որ զինված ուժերը, լինելով գործադիր իշխանության կազմում գործող առանձնահատուկ ենթահամակարգ, ունեն սեփական անհրաժեշտություններն ու կարիքները: Վերջիններիս լուծումը պետք է որպես ելակետ ընդունի զինված ուժերի սահմանադրական կարգավիճակի և գործառույթների իրականացման արդյունավետությունը: Մասնավորապես, խորհրդարանական կառավարման ձևի պայմաններում անգամ զինված ուժերը պետք է զերծ մնան կոլեգիալ և ապակենտրոն կառավարման կառուցակարգերից:

Մինևույն ժամանակ ժողովրդավարական պետությունում զինված ուժերը գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո, որը ենթադրում է զինված ուժերի ապաքաղաքականացվածություն, քաղաքական ենթակայություն և քաղաքացիական հասարակության կողմից մշտադիտարկում: Նշյալ կառուցակարգերի և զինված ուժերի կենտրոնաձիգ կառավարման համակարգի պատշաճ գործառման պարագայում կբացառվի կամ նվազագույնի կհասցվի զինված ուժերի քաղաքական հայտի ներկայացման և քաղաքական իշխանության բռնազավթման հնարավորությունը, ինչպես նաև թույլ կտրվի իրականացնել ամբողջական և ներդաշնակ պետական քաղաքականություն:

Հայաստանում 2015 թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում փոփոխված զինված ուժերի կառավարման համակարգն ունի էական սահմանադրական խտրեր, որոնք ներկայացվեցին վերևում: Այդ խտրերը չեզոքացնելու համար առաջարկվում է.

1. Սահմանադրության մեջ կատարել փոփոխություն և Վարչապետին կամ Նախագահին վերապահել զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի կարգավիճակ՝ թե՛ պատերազմական, թե՛ խաղաղ ժամանակներում,
2. Սահմանադրության մեջ կատարել փոփոխություն և վերանայել Անվտանգության խորհրդի կարգավիճակը՝ այն դարձնելով խորհրդակցական-համակարգող գործադիր-կարգադրիչ փոխարեն,
3. Նախքան սահմանադրական փոփոխությունների կատարումն «Անվտանգության խորհրդի կազմավորման և գործունեության մասին» օրենքով սահմանել Անվտանգության խորհրդի նախագահի՝ Վարչապետի կամ Անվտանգության խորհրդի քարտուղարի պարտականությունը Խորհրդի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդմամբ հանդես գալ Ազգային ժողովում, իսկ Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքով սահմանել այդ հաղորդման ներկայացման, Ազգային ժողովում դրա քննարկման կարգը, նույն օրենքով

սահմանել, որ Անվտանգության խորհրդում որոշումների ընդունման ժամանակ վճռորոշ ձայն ունի Վարչապետը: Նման կերպ կընդգծվի Վարչապետի՝ որպես Կառավարության ղեկավարի ուղղորդող դերն Անվտանգության խորհրդում, ինչը թույլ կտա վարչապետին համակարգել ինչպես Կառավարության, այնպես էլ Անվտանգության խորհրդի գործունեությունը և ապահովել այս երկու մարմնի աշխատանքների ներդաշնակությունն ու փոխլրացումը,

4. Սահմանադրության մեջ կատարել փոփոխություն և վերացնել Պաշտպանության նախարարության (նախարարի) և Զինված ուժերի գլխավոր շտաբի (Շտաբի պետի) միջև առկա ապակենտրոնացված հարաբերությունները՝ սահմանելով Զինված ուժերի գլխավոր շտաբի պետի ենթակայությունը Պաշտպանության նախարարին թե՛ պատերազմական, թե՛ խաղաղ ժամանակներում: